ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏ - ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

ՀՐԱՄԱՆ

ԹԻՎ 34-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 20-Ի ԹԻՎ 26-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների և Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարի 2023 թվականի մարտի 14-ի թիվ 4-Լ հրամանով հաստատված հավելվածի 19-րդ կետի 5-րդ և 7-րդ ենթակետերի համաձայն՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի 2020 թվականի հուլիսի 20-ի «Հայաստանի Հանրապետության ոստիկանության օպերատիվ կառավարման կենտրոնի կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 26-Լ հրամանով հաստատված հավելվածի 14-րդ կետը լրացնել նոր 12.1-ին ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«12.1. ճանապարհային երթևեկության ծանրաբեռնվածության դեպքում պարեկային կարգախմբերի մեկնման կազմակերպումը,»:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ *Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ*

«24» 11 2023թ.

ք. Երևան